# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

**« ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/01 » ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի**

Ք.Վեդի, Գայի 2 — 2021-12-23-ին ժամը 17:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Սամվել Խաչատրյան (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Աստղ Ջոհրաբյան (ԳԱ)
Հասմիկ Գաբրիելյան (ԳԱ)
Սիլվա Գրիգորյան (ԲԱ)
Անուշիկ Մանուկյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Բազիկյան (ԳՀԱ)

## 1.Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների հայտերի գնահատման մասին

Սամվել Խաչատրյան

1.1 Մասնակցի կողմից շտկման ենթակա փաստաթղթի ներկայացման և գնահատման մասին.

''ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/01'' ծածկագրով դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի մասնակից՝ <<ՋԻԱՐՋԻ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր փաստաթուղթը՝ Հավելված 1.1-ը, ներկայացված էր վերոնշյալ ծածկագրով հրավերի 4.3 կետի 2-րդ ենթակետի պահանջներին անհամապատասխան:

Ուստի գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել վերոգրյալ մասնակցին շտկել առկա անհամապատասխանությունը:

<<ՋԻԱՐՋԻ>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է Հավելված 1.1 փաստաթուղթը, սակայն այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես լիարժեք ներկայացված չեն ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը, իսկ արտադրողներ սյունակում ներկայացված են այնպիսի արտադրողներ, որոնց արտադրանքը գրանցված չէ Գրանցված դեղերի պաշտոնական www.pharm.am կայքում:

Այսպիսով, հանձնաժողովը որոշեց. Գնահատել ''ՋԻԱՐՋԻ'' ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1 փաստաթուղթը հրավերին պահանջերին անհամապատասխան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0*

1.2 Մասնակցի կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին.

Հաշվի առնելով հանձնաժողովի կողմից ընդունված 1.1 որոշումը և մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը հանձնաժողովը որոշեց բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար, բացառությամբ ''ՋԻԱՐՋԻ'' ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, որը գնահատվում է անբավարար:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0*

## 2. Մասնակիցների առաջարկած գների և բանակցությունների կազմակերպման մասին

Սամվել Խաչատրյան

Հաշվի առնելով, որ ''Վեդու բժշկական կենտրոն'' ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/01 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ 2021թ. Դեկտեմբերի 29-ին, ժամը 11:00-ին, հրավերով պահանջված փաստաթղթերի առկայությունը բավարարած մասնակիցները հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների: Կամ մինչև բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը՝ 2021թ. Դեկտեմբերի 29-ին, ժամը 11:00-ն, նոր նվազեցված գնային առաջարկներն ուղարկել lusine.bazikyan@bk.ru էլեկտրոնային փոստին՝ բնօրինակ տարբերակից սկանավորված ձևով կամ էլեկտրոնային ստորագրությամբ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0*

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Խաչատրյան Սամվել

Գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի գնահատման նիստը և հաջորդ նիստը հրավիրել բանակցությունների վարման վերջնաժամկետին՝ **29.12.2021թ-ին ժամը 11:00-ին** Վեդու բժշկական կենտրոն ՓԲԸ, շենքում՝ Արարատի մարզ ք.Վեդի Գայի 2:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0*

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Ս.Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Ա.Զոհրաբյան

____________ Ս.Գրիգորյան

____________ Հ.Գաբրիելյան

____________ Ա.Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Լ.Բազիկյան